Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գործարար միջավայրի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով, Նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Նախարարը՝ Նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ:

4. Վարչության կառուցվածքում ընդրգկվում են Վարչության պետը և Վարչության բաժինները:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Վարչության հիմնական նպատակն է բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի ձևավորումը:

6.Վարչության հիմնական խնդիրներն են՝

1) գործարար միջավայրի բարելավման խթանումը.

2) ներդրումային բարենպաստ միջավայրի ապահովումը, օտարերկրյա և տեղական ներդրումների խթանումը

3) ներքին առևտրի զարգացման խթանումը.

4) մրցակցության պայմանների բարելավումը.

5) սպառողների շահերի պաշտպանության համակարգի զարգացումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչության գործառույթներն են՝

1) մշակում, դիտանցում է գործարար միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականությունը, իրականացնում և համակարգում դրա հետ կապված միջոցառումները.

2) բացահայտում է գործարար միջավայրի խոչընդոտները և առաջարկություններ ներկայացնում դրանց վերացման ուղղությամբ, ձևավորում կազմակերպությունների ստեղծմանը և զարգացմանը նպաստող գործարար միջավայր.

3) ապահովում է հետադարձ կապ գործարար համայնքի հետ, մասնավորապես՝ իրականացնում է իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ծանուցումներ, ինչպես նաև բարեփոխումներին միտված առաջարկությունների քննարկումներ գործարարների հետ.

4) ապահովում և համակարգում է գործարար և ներդրումային միջավայրին առնչվող խնդիրների «Թեժ գծի» աշխատանքները.

5) իրականացնում է հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքներ.

6) գործարար ու ներդրումային բարենպաստ միջավայրի ապահովման նպատակով՝ ուսումնասիրում է մաքսային, հարկային և ոչ հարկային եկամուտների քաղաքականության օրենսդրական և վարչարարական ընթացակարգերը և առաջարկություններ ներկայացնում դրանց կատարելագործման ուղղությամբ, մշակում է համապատասխան իրավական ակտերի նախագծեր.

7) մշակում է ներդրումների ներգրավման, ներդրումների և ներդրողների պաշտպանության քաղաքականությունը և օրենսդրական դաշտը, իրականացնում դրա վերանայումը՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմինների և գործարար համայնքի հետ.

8) իրականացնում է ներդրումային խոչընդոտների վերացմանն ուղղված միջոցառումներ.

9) ապահովում է օտարերկրյա ներդրումներին առնչվող միջազգային համաձայնագրերի մշակման աշխատանքները.

10) մշակում է ծառայությունների առևտրի քաղաքականությունը, համակարգում է ծառայությունների շուկաների ազատականացման և ծառայությունների միասնական շուկայի ձևավորման աշխատանքները,

11) մշակում է կորպորատիվ կառավարման իրավական դաշտը և կանոնները.

12) իրականացնում է տնտեսական գործունեության տեսակների, պաշտոնների և զբաղմունքների դասակարգիչների հետ կապված գործառույթներ.

13) մասնակցում է գործարար և ներդրումային ոլորտներին առնչվող քննարկումներին և այլ միջոցառումներին.

14) իր իրավասությունների շրջանակում իրականացնում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ գործարար միջավայրի ոլորտում խորացված կարգավորման ազդեցության գնահատում.

15) մասնակցում է աշխատանքային օրենսդրության կատարելագործմանը՝ ապահովելով գործատուների և աշխատողների շահերի հավասարակշռությունը.

16) մշակում է սպառողների իրավունքների պաշտպանության և անվտանգության ապահովման մեխանիզմները,

17) մշակում և դիտանցում է ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների կիրառման քաղաքականությունը.

18) մշակում է տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականությունը՝ համագործակցելով ոլորտային շահագրգիռ մարմինների հետ, իրականացնում է մրցակցության պաշտպանության ոլորտում Նախարարությանը վերապահված լիազորությունները.

19) Նախարարության այլ ստորաբաժումների հետ համատեղ, մշակում է Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, ներկայացնում է առաջարկություններ, եզրակացությունների, նախապատրաստում այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր.

20) իրականացնում է իրավական ակտերով վերապահված՝ Նախարարության նպատակներից ու խնդիրներից բխող այլ գործառույթներ:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից.

1) Գործարար միջավայրի բարելավման բաժին.

2) Ներդրումային քաղաքականության բաժին.

3) Ներքին առևտրի բաժին:

9. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ

համագործակցելով:

V.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Գործարար միջավայրի բարելավման բաժնի հիմնական գործառույթներն են.

1) մշակում, դիտանցում է գործարար միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականությունը, իրականացնում և համակարգում դրա հետ կապված միջոցառումները՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմինների և գործարար համայնքի հետ.

2) բացահայտում է գործարար միջավայրի խոչընդոտները և առաջարկություններ ներկայացնում դրանց վերացման ուղղությամբ,

3) ապահովում է հետադարձ կապ գործարար համայնքի հետ, մասնավորապես՝ իրականացնում է իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ծանուցումներ, ինչպես նաև բարեփոխումներին միտված առաջարկությունների քննարկումներ գործարարների հետ.

4) ապահովում և համակարգում է գործարար միջավայրին առնչվող խնդիրների «Թեժ գծի» աշխատանքները.

5) իրականացնում է հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքներ.

6) գործարար բարենպաստ միջավայրի ապահովման նպատակով՝ ուսումնասիրում է մաքսային, հարկային և ոչ հարկային եկամուտների հավաքագրման օրենսդրական և վարչարարական ընթացակարգերը և առաջարկություններ ներկայացնում դրանց կատարելագործման ուղղությամբ.

7) մասնակցում է գործարար ոլորտին առնչվող քննարկումներին և այլ միջոցառումներին.

8) իր իրավասությունների շրջանակում իրականացնում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ գործարար միջավայրի ոլորտում խորացված կարգավորման ազդեցության գնահատում.

9) մասնակցում է աշխատանքային օրենսդրության կատարելագործմանը՝ ապահովելով գործատուների և աշխատողների շահերի հավասարակշռությունը.

10) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, մշակում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, ներկայացնում

է առաջարկություններ, եզրակացությունների, նախապատրաստում այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր.

11)իրականացնում է իրավական ակտերով վերապահված՝ Նախարարության նպատակներից ու խնդիրներից բխող այլ գործառույթներ:

11. Ներդրումային քաղաքականության բաժնի հիմնական գործառույթներն են.

1) ներդրումային միջավայրի բարելավում, այդ նպատակով՝ ուսումնասիրում է մաքսային, հարկային և ոչ հարկային եկամուտների քաղաքականության օրենսդրական և վարչարարական ընթացակարգերը և առաջարկություններ ներկայացնում դրանց կատարելագործման ուղղությամբ.

2) մշակում է ներդրումների ներգրավման, ներդրումների և ներդրողների պաշտպանության քաղաքականությունը և օրենսդրական դաշտը, իրականացնում է դրա վերանայումը՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմինների և գործարար համայնքի հետ.

3) ապահովում է օտարերկրյա ներդրումներին առնչվող միջազգային համաձայնագրերի մշակման աշխատանքները.

4) մշակում է կորպորատիվ կառավարման իրավական դաշտը և կանոնները.

5) իրականացնում է տնտեսական գործունեության տեսակների, պաշտոնների և զբաղմունքների դասակարգիչների հետ կապված գործառույթներ.

6) ապահովում և համակարգում է ներդրումային միջավայրին առնչվող խնդիրների «Թեժ գծի» աշխատանքները.

7) իրականացնում է ներդրումային խոչընդոտների վերացմանն ուղղված միջոցառումներ.

8) մասնակցում է ներդրումային ոլորտին առնչվող քննարկումներին և այլ միջոցառումներին.

9) մշակում է ծառայությունների առևտրի քաղաքականությունը, համակարգում է ծառայությունների շուկաների ազատականացման և ծառայությունների միասնական շուկայի ձևավորման աշխատանքները,

10) կազմակերպում և համակարգում է ներդրումային ոլորտի ֆորումներ, համաժողովներ, խորհրդակցություններ.

11) իր իրավասությունների շրջանակում իրականացնում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ գործարար միջավայրի ոլորտում խորացված կարգավորման ազդեցության գնահատում.

12) Նախարարության այլ ստորաբաժումների հետ համատեղ, մշակում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, ներկայացնում է առաջարկություններ, եզրակացությունների, նախապատրաստում այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր.

13) իրականացնում է իրավական ակտերով վերապահված՝ Նախարարության նպատակներից ու խնդիրներից բխող այլ գործառույթներ:

12. Ներքին առևտրի բաժնի հիմնական գործառույթներն են.

1) մշակում է ներքին շուկայի կանոնակարգմանն ու պաշտպանությանն ուղղված քաղաքականությունը, իրականացնում և համակարգում է վերջինիս զարգացմանն ու կարգավորմանն ուղղված միջոցառումները.

2) մշակում և ներդնում է ներքին շուկայի մասնակիցների համագործակցության զարգացման համակարգեր.

3) մշակում է տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականությունը՝ համագործակցելով ոլորտային շահագրգիռ մարմինների հետ, իրականացնում է մրցակցության պաշտպանության ոլորտում Նախարարությանը վերապահված լիազորությունները.

4) մշակում է սպառողների իրավունքների պաշտպանության և անվտանգության ապահովման մեխանիզմները.

5) իր իրավասությունների շրջանակում համակարգում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մրցակցության ոլորտում խորացված կարգավորման ազդեցության գնահատմանն ուղղված աշխատանքները.

6) Նախարարության այլ ստորաբաժումների հետ համատեղ, մշակում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, ներկայացնում է առաջարկություններ, եզրակացությունների, նախապատրաստում այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր.

7) իրականացնում է իրավական ակտերով վերապահված՝ Նախարարության նպատակներից ու խնդիրներից բխող այլ գործառույթներ:

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

13. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:

14. Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Նախարարին:

15. Վարչության բաժինները ղեկավարում են Բաժինների պետերը:

16. Բաժինների պետերն անմիջական ենթակա և հաշվետու են վարչության պետին:

17. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության բաժինների պետերից մեկը՝ վարչության պետի ներկայացմամբ:

18. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինողի կողմից:

19. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

20. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիրազորությունների, շփումների և նեկայացուցչության խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:»